Մրցույթ՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի «Վարդաձոր գյուղի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի <<Մաթեմատիկա առարկայի՝ 10 դ/ժամ>>, <<Անգլերեն առարկայի՝ 17 դ/ժամ >>,<<Ինֆորմատիկա (ԹԳՀԳ) առարկայի՝ 7 դ/ժամ>>, <<Հ լեզու առարկայի՝ 3 դ/ժամ>>, <<Գրականություն առարկայի՝ 4 դ/ժամ>>, <<Երաժշտություն առարկայի՝ 9 դ/ժամ>>, <<Կերպարվեստ առարկայի՝ 10 դ/ժամ>> ուսուցչի թափուր տեղերի համար

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝
- դիմում (ձև 1),
- 1 լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (ձև 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք: Փաստաթղթերն ընդունվում են 2024 թվականի օգոստոսի 22-ից մինչև 2024 թվականի սեպտեմբերի 4-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 9:00-ից 17:00-ը, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից:

Մրցույթները տեղի կունենան **2024 թվականի սեպտեմբերի 10-ին՝ ժամը 14:00-ին**, Վարդաձոր գյուղի միջնակարգ դպրոցում:

Հասցե՝ ՀՀ Գեղարքունիքի մարզ, գ. Վարդաձոր, Ալաշկերտի 43
Տեղեկությունների համար զանգահարել 093236526 հեռախոսահամարով: